ՀԱՐՍԱՆԻՔԸ ՇԱՏԱԽՈՒՄ

Պ. Մ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Շատախը պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի գավառներից էր։ Այն գտնվում է Վանա լճի հարավային կողմում և շրջապատված է բարձրագագաթ լեռներով։

Գավառի հայությունը, ինչպես կյանքի այլ բնագավառներում, այնպես էլ հարսանիքի ժամանակ ուներ իր յուրահատուկ նկարագիրը՝ հատկանշական միայն շատախցիներին։ Ամուսնանալու ճշգրիտ տարիքը տղայի կամ, մանավանդ, աղջկա համար ստույգ որոշված չէր։ Գոյություն ուներ «խասած ախչիկ» կամ «խասած տղա» հասկացությունը և դրանով էլ ամեն ինչ սպառվում էր։ Ընդհանուր առմամբ՝ այդ հասկացությունը աղջկա համար ուժի մեջ էր մտնում 14—15 տարեկան հասակից, բացառիկ դեպքերում ավելի վաղ, իսկ տղայի համար քիչ ավելի ուշ։ Ամուսնանալու տարիքի հասած տղայի ծնողները օրեր առաջ հարցուփորձով գտնում էին իրենց օջախին, իրենց ընտանիքին հարմար աղջիկ։ Ճշտվում էր, օրինակ, թե ո՞վքեր են աղջկա ծնողները, ի՞նչ զբաղմունքի տեր են, ի՞նչ հարազատներ ունեն և այլն։ Դրանից հետո, դարձյալ հարցուփորձի միջոցով, ստանում էին աղջկա ծնողների համաձայնությունը և ապա միայն տեղեկացնում, որ գալու են աղջկան նշանելու։

Նշանդրեքը Շատախում հիմնականում տեղի էր ունենում շաբաթ օրերին։ Այդ օրը տղայի ծնողներն, իրենց պատկառազդու բարեկամների հետ մեկտեղ, գյուղական քահանայի ուղեկցությամբ, գնում էին աղջկա տուն։ Հյուրերին ընդունում էին հարգանքով, բացված սեղանի շուրջ։ Կողմնակի զրույցից հետո, տղայի խմբի ամենահարգված կանանցից մեկը հայտնում էր իրենց գալու նպատակը։ Երկուստեք համաձայնության գալով, տղայի կողմի ամենատարեց կանանցից մեկը մատանին հագցնում էր աղջկա մատին, քահանան օրհնում էր նշանը, և նշանդրեքը համարվում էր կայացված։ Մեկ-երկու շաբաթից հետո սկսվում էր հարսանիքի պատրաստությունը։

Հարսանիքից մեկ օր առաջ տեղի էր ունենում տաշտաքերեքի արարողությունը, որի էությունը հետևյալն էր. հավաքվում էին ամուսնացող տղայի հարևան և բարեկամ ազգ աղջիկները՝ հարսանիքի խմորի համար ալյուր մաղելու։ Ըստ ընդունված կարգի, յուրաքանչյուր աղջիկ պետք է մաղեր մեկ մաղ։ Տաշտաքերեքը հարսանիքի ամենաուրախ արարողություններից էր։ Աղջիկները կատակում էին, սրամտում, երգիծանքի նյութ դարձնում հարս ու վեսային, նրանց հարազատներին, ազգականներին։ Թաղի տղաներն էլ, իրենց հերթին, իմանալով տաշտաքերեքի մասին, շտապում էին այնտեղ, աշխատում դռներից կամ պատուհաններից խոսքի բռնվել աղջիկների հետ։

Տաշտաքերեքի հաջորդ օրը սկսվում էր հարսանիքը։ Տղայի տանը բացվում էր ճոխ սեղան, հավաքվում էին բոլոր հարազատները, հեռու-մոտիկ բարեկամները, ազգականները։ Հնչում էր ավանդական դհոլ-զուռնան։ Մին-

չև կեսգիշեր քեֆ անելուց հետո, սկսվում էր փեսային սափրելու արարողությունը։ Հատուկ հրավիրված սափրիչը փեսային նստեցնում էր կենտրոնում դրված աթոռին և պատրաստում իր գործիքները։ Փեսայի երկու կողմերում նստում էին նրա քույրերը (վերջիններիս բացակայության դեպքում, այդ դերը կատարում էին բարեկամուհիները) և մեկական մոմ բռնած, գովում էին իրենց թագավոր-փեսային, հետևյալ երգով.

Թագվոր ինչ պիրեմ քի նման,
Քո կանաչ արևի նման,
Լույս աղոթրան, որ կպացվեր,
Պացվեր քու արևի նման։

Աստվածածնա դեմ կայնիր ես,
Կանաչ ու կարմիր կապիր ես,
Աստված քեզ պախի պարզերես՝
Բարով քո թագուհին վայելես։

Թագվոր ինչ պիրեմ քի նման,
Քո կանաչ արևի նման.
Էն արեգակ, որ կը ծագեր,
Ծագեր քո արևի նման։

Անթառամ ծաղիկ, որ կը ծաղկեր,
Ծաղկեր քո արևի նման.
Կարմիր վարդ, որ կը պացվեր,
Պացվեր քո արևի նման։

Շուշան ծաղիկ, որ կը ծաղկեր՝
Անուշ բուրեր քո թագուհուն,
Նարգիզ ծաղիկ, որ կը ծաղկեր՝
Անուշ բուրեր քո թագուհուն և այլն։

Սափրելուց հետո սկսվում էին փեսայի հագուստներն օրհնելու («խալավոխնեք») և հագցնելու արարողությունները։ Դա կատարում էր այդ նպատակով հրավիրված քահանան, որը հոգևոր երգեր երգելով, մեկ առ մեկ օրհնում էր փեսայի հագուստները, իսկ ընկերները օգնում էին նրան հագնվել։ Այս ամենից հետո գնում էին հարսին բերելու։ Փեսայի ծնողները նախապես արդեն պատրաստած սինին՝ ամենաընտիր հագուստներով, ձեռքերին դնելու հինայով և զանազան ուտելիքներով (նուռ, խնձոր) տալիս էին նախօրոք ընտրված երիտասարդներից մեկին և երգ ու նվագի ուղեկցությամբ ճանապարհվում հարսի տուն։

Մինչ հարսանքավորները հարսի տանը զբաղվում էին ուտել-խմելով, տեղի էր ունենում հարսին հագցնելու արարողությունը։ Փեսայի և հարսի կողմից ընտրված աղջիկները, համապատասխան երգերի ուղեկցությամբ, սկսում էին հագցնել հարսին։ Հագցնող աղջիկներին ղեկավարում էր տղայի կողմից որևէ տարեց կին, որը հագցնող աղջիկներին նվերներ տալով, ծափերի, նվա-

գի ու նվերների ուղեկցությամբ, հարսին բազմեցնում էր փեսայի կողքին։

Բավական քեֆ անելուց հետո, սկսվում էր հարսին տանից դուրս բերելու արարողությունը։ Հարսի եղբայրը կամ մոտիկ բարեկամներից մեկը բռնում էր տան դուռը և թույլ չէր տալիս նրան տանից դուրս հանել։ Այս ամենը տևում էր այնքան ժամանակ, մինչև փեսայի ծնողները նրան նվերներ էին տալիս, և թույլատրում համբուրել փեսայի քրոջը։

Ապա հարսանքավորները դնում էին տոնականորեն զարդարված եկեղեցի։ Քահանան օրհնում էր ամուսնացողներին, տեղի էին ունենում զանազան հոգեվոր արարողություններ։ Պսակադրության հանդեսն ավարտվելուց հետո, հարսին ու փեսային եկեղեցուց դուրս բերելիս, քավորը և ազաբաշին եկեղեցու դռան մոտ խաչաձև բռնում էին իրենց թրերը, որոնց տակից անցնում էին հարսն ու փեսան։

Տղայի տան դռնից ներս մտնելիս նորապսակների ոտքերի տակ դրվում էր մի հողե քասա, որը կոտրելով, ըստ նախնական հավատալիքի, չարը խափանվում էր, իսկ այդ ժամանակ հարսանիքին մասնակցող երիտասարդները դրսում պար էին բռնում և երգում փեսայի մորը նվիրված հետևյալ երգը.

Դուրս արի, դուրս արի,
Թագվորի մեր, դուրս արի,
Խանում, խաթուն եմ բերել
Թագվորի մեր դուրս արի,
Մաղ մ՝ չամիչ առ արի։

Ախ դուրս արի, դուրս արի,
Թագվորի մեր դուրս արի,
Սարի ջեյրան եմ բերել,
Թագավորի մեր դուրս արի...

Թագվորի մեր դուրս արի,
Լվացք անող եմ բերել
Թագավորի մեր դուրս արի,
Մաղ մ՝ փշատ առ արի և այլն։

«Թագվորի մայրը» (փեսայի մայրը) դիտմամբ փոքր-ինչ ուշացումով էր դուրս դալիս։ Այդ ժամանակ էլ, ահա, դրսում պարող երիտասարդները երգում էին.

Ախ դուրս արի, դուրս արի,
Թագվորի մեր դուրս արի,
Քեզ գլուխ դմփող եմ բերել
Թագվորի մեր դուրս արի։

Ախ դուրս արի, դուրս արի...
Կադա (իմա՝ հոգս, խաթա) բալա եմ բերել
Թագվորի մեր դուրս արի։

Ախ դուրս արի, դուրս արի...
Կրակ, պատիժ եմ բերել
Թագվորի մեր դուրս արի և այլն։

Վերջապես, փեսայի մայրը մի մեծ մաղ ձեռքին՝ լի պնդուկով, չամչով, խնձորով և կենտրոնում երեք շիշ օղի դրած, դուրս էր դալիս երիտասարդներին ընդառաջ։ Պարող երիտասարդները վերցնում էին օղին, իսկ մրգեղենը շաղ տալիս պարը դիտողների վրա։ Այս անգամ էլ ծայր է առնում նոր երգ.

Ախ եկավ, եկավ, եկավ,
Թագվորի մերը եկավ,
Բեռով-բարխանով եկավ
Մեր աղիզ խաթունն եկավ։

Ախ եկավ, եկավ, եկավ,
Թագվորի մերը եկավ,
Խերով-խաբարով եկավ,
Իր տան դովլաթով եկավ։

Հարսանիքը տեղի էր ունենում երկու սենյակում։ Մեկում նստում էին տղամարդիկ, իսկ մյուսում՝ կանայք։ Գետնին փռում էին հատուկ գորգեր, որի վրա հյուրերը նստում էին ծալապատիկ («Բաղդաշի») ձևով։ Նրանց առջև, ցածր սեղանների վրա, դրվում էր ուտելիքը։ Սենյակի մի անկյունը անջատվում էր գույնզգույն ջեջիմով, որը կոչվում էր «Հարսի թախթ»։ Այդտեղից էլ հարսը իր հարազատ մեկ-երկու աղջիկների հետ հետևում էր հարսանիքի ընթացքին։

Հարսանիքի պաշտոնական արարողությունը տևում էր մինչև առավոտ, սակայն դրանից հետո էլ, հաճախ, մի քանի օր շարունակ երկու կողմի հարազատները հավաքվում էին մերթ հարսի, մերթ փեսայի հոր տները՝ «կրոնքի» այսինքն՝ մնացածը ուտելու։ Կրճոնքը կարող էր տևել նույնիսկ մի շաբաթ, երբեմն էլ՝ ավելի։ Կրճոնքից հետո միայն հարսանիքը համարվում էր ավարտված։ Ահա Շատախի հարսանիքի համառոտ նկարագիրը, որն այսօր, արդեն պատմական հուշ է։

СВАДЬБА В ШАТАХЕ

П. М. ТЕР-МКРТЧЯН

Резюме

Шатах находится в Западной Армении, в Васпуракане (ныне Турция). В числе интересных обычаев, присущих этому району, особое место занимают свадебные обряды, которые до сих пор почти не исследованы. В статье описываются характерные особенности этого обряда и приводится несколько образцов свадебных песен, которые в этнографическом отношении представляют определенный интерес.